Հայոց լեզվի և (հայ) գրականության ուսուցիչների վերապատրաստման դասընթաց

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Մշակութային կարողունակության ձևավորումը (հայ) գրականության դասերին

Կատարող՝ Ալվարդ Սահակյան

Դպրոց՝ Արարատի մարզի Այնթապի Բյուզանդ Մարգարյանի անվան հ.2 միջնակարգ դպրոց

Առարկա՝ հայոց լեզու, հայ գրականություն

Կազմակերպություն՝ «Երևանի Լեռյի անվան № 65 ավագ դպրոց» ՊՈԱԿ

Խմբի պատասխանատու՝ Անահիտ Զոհրաբյան

Երևան

2023

Բովանդակություն

Ներածություն 2
Գեղեցիկը կփրկի աշխարհը 4
Բոլոր ճանապարհները տանում են... 8
Եզրակացություն 24
Օգտագործված գրականության ցանկ 26

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

21-րդ դարի երկրորդ տասնամյակը իր չափորոշիչներն է թելադրում հասարակության բոլոր խավերին՝ խստագույնս սահմանելով կյանքի մարտահրավերներին պատրաստ անհատների ձևավորում՝ ինտեգրված համաշխարհայնացման գործընթացին: Արագ ու անսպասելի փոփոխվող աշխարհում, որին բնորոշ է մտածական գործընթացների արագացում, տեղեկատվական տեխնոլոգիաների գրոհ, կյանքի խելակորույս տեմպ, մարդու կրթությունն ու դաստիարակությունը դառնում են անգնահատելի արժեք, պատվար, միջնաբերդ՝ փլուզվող ու կորչող , անհետացող ու փոշիացող նախկին արժեքների համակարգի հանդիման: Զարգացնց մեծանում է անհատի հոգևոր կերտվածքի, աշխարհայացքի, վարքագծի ձևավորումը, կարևորվում նրա անհատական ու հասարակական դիրքորոշումն ու վարքը:

Մարդու դաստիարակությունը (մասնավորապես մշակութային) կոչված է նպաստելու մարդու հոգևոր բազմակողմանի զարգացմանը, կրթելու նրան, օգնելու, կյանքում, հասարակության ու բնության մեջ ճանաչելու, գնահատելու և ավելացնելու գեղեցիկը, սովորեցնելու նիշտ ապրել: Հենց սրանք են մարդու մշակութային դաստիարակության նպատակները, որոնց իրագործման առաջին պատասխանատուն դպրոցն է: Ինչ խոսք, այս դաստիարակությունն սկսվում է շատ վաղ, մինչ երեխայի լույս աշխարհ գալը և շարունակվում ողջ կյանքի ընթացքում, սակայն այս գործում դպրոցի դերը բացառիկ է և անկրկնելի: Ուսումնական բոլոր առարկաները, դպրոցական միջավայրը, ուսուցիչը, կրթական գործընթացի բոլոր մասնակիցները ունեն իրենց կարևոր դերակատարությունը այս պատասխանատու գործում, սակայն գրականության դերը անհնար է գերագնահատել, քանի որ գեղարվեստական մարմնավորում ստացած գաղափարների դերը հասարակական կյանքում անհամեմատ մեծ դեր ու կշիռ և բացառիկ հնչեղություն ունեն:

Հասարակությունը, ծնողները, դպրոցն ստուգող վերադաս մարմինները դպրոցի գնահատման չափանիշ հաճախ ընդունել և ընդունում են սոսկ գիտելիքը՝ սահմանափակելով կրթության դերն ընդհանրապես: Մինչդեռ գիտելիքը առանց արժեհամակարգի, կարող է խիստ վտանգավոր լինել՝ դառնալով սպառնալիք մարդու և հասարակության համար:

Արժեհամակարգի ձևավորման գործում մեծ է դաստիարակության դերը՝գեղագիտական, բարոյական, սոցիալական և այլն: Հանրակրթական պետական չափորոշիչը, ի թիվս 8 կարողունակությունների, սահմանում է մշակութային կարողունակությունը. «Սովորողները ճանաչում են հայ մշակույթն ու մարդկային քաղաքակրթությունների մշակութային բաղադրիչները՝ որպես մարդկային զգացմունքների և գործողությունների կողմնորոշիչներ: Նրանք արժևորում են սեփական ինքնությունը, ընտանիքի, համայնքի և պետության դերը, ունեն Հայաստանի աշխարհագրության, հասարակական-քաղաքական համակարգի և պատմության հիմնարար իմացություն: Աշակերտները ձևավորում են սեփական նախասիրություններ ազգային և համաշխարհային մշակութային ժամանակաշրջանների ուսումնասիրության ընթացքում: Նրանք ի

վիճակի են զարգացնել սեփական մշակութային ու գեղագիտական պատկերացումները՝ արժևորելով հոգևոր և նյութական ժառանգությունն ու մշակութային բազմազանությունը, ճանաչելով հայ և համաշխարհային գրականությունն ու արվեստը և ձևավորելով մշակութային գրագիտություն և հաշակ»:

Այս աշխատանքը մի փորձ է գրականության դասավանդման գործընթացում ներկայացնելու դաստիարակության խնդիրները, միջոցները , ձևերը, մշակութային դաստիարակության ձևավորումն ու զարգացումը:

ԳԵՂԵՑԻԿԸ ԿՓՐԿԻ ԱՇԽԱՐՀԸ

«Էսթետիկա» բառը ծագել է հունարեն αἰσθητική (τέχνη) «գիտություն զգայական ընկալման օբյեկտների(առարկաների) մասին» ,αἴσθησις «զգայական ընկալմանը վերաբերող», (αἰσθάνομαι «զգալ, ընկալել» (նախահնդեվրոպական *au- «ընկալել») բառից:

«Էսթետիկա» բառի ժամանակակից նշանակությունը ծագում է ֆրանկֆուրտյան պրոֆեսոր Ա. Գ. Բաումգարտենի «Aesthetica» ստեղծագործությունից: Թվում է՝ « գեղագիտություն» հասկացությունը նեղացնում է բառի սկզբնական իմաստը, որ, անկասկած, հետաքրքիր թեմա է, սակայն մեր խնդրո առարկան չէ: Մշակութային մտքի պատմությունը իր բազմադարյան գոյության ընթացքում առաջ է քաշել գեղագիտական տարբեր հայացքներ՝ փոխելով առարկան և խնդիրները, ուսումնասիրվող հարցի շրջանակը, որն էլ ավելի հարստացրել է այն՝ ընդգրկելով և՛ փիլիսոփայական, և՛բարոյագիտական, և՛աստվածաբանական, և՛ մշակութային, և՛ գիտության ու արվեստի ոլորտների բազում խնդիրներ: «Գեղագիտությունը գիտություն է համամարդկային արժեքների պատմականորեն պայմանավորված էության, դրանց ստեղծման, ընկալման, գնահատման ու

յուրացման մասին»:[1] Դա նշանակում է, որ գեղագիտությունը ընդգրկում է թե՛ նյութական , թե՛ հոգևոր արժեքներ և ներթափանցում մարդու կենսագործունեության բոլոր ոլորտները՝ պայմանավորելով մարդու ես-ը, աշխարհին ուղղված նրա հայացքը, ներհեցողության ունակությունը, նրա գիտելիքները, նրա բնավորությունը, նրա մարդ տեսակը: Մշակութային դաստիարակությունը ենթադրում է անձի ներդաշնակ ու համակողմանի կրթվածություն , որն առաջին հերթին նպաստում է անձի, անհատի ինքնահաստատմանը: Դելֆյան տաճարին փորագրված « Ծանի՛ր զքեզ» (Ճանաչի՛ր ինքդ քեզ») ասույթը մարդու էության, կյանքի իմաստի ըմբռնմանն ուղղված հանճարեղ ձևակերպում է, որը Սոկրատեսի փիլիսոփայական խորհրդածությունների ելակետն էր և ժամանակակից աշխարհում էլ դիտարկվում է որպես աշխարհահանաչողության հիմք:

Անձի մշակութային կարողունակության դաստիարակությունը շարունակական գործընթաց է, որի չափման գործիքները տարբեր են՝ կախված ժամանակաշրջանից, պետություններից և գաղափարախոսությունից, սակայն դա ամենևին չի նշանակում, թե չկան, բացակայում են համընդհանուր, համամարդկային արժեքներ: Գերմանացի փիլիսոփա Մարտին Հայդեգերը արժեքային մոտեցման խնդիրը քննելիս իրավացիորեն ընդգծմանում է. « Այնպիսի տպավորություն է, որ իրերը լույս աշխարհ են գալիս մերկ, և արժեքները զգեստներ են,որոնք մենք իրենց հագցնում ենք, որ չմրսեն»:[2] Եղել են, կան ու կլինեն համամարդկային հաստատուն արժեքներ, այլ բան է, որ դրանց ընկալումը, վերլուծությունը փոփոխական մեծություններ են:

Անձի, անհատի գեղագիտական դաստիարակության հիմնախնդիրը քննելիս անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք գործոններ՝

- ժամանակաշրջանի առանձնահատկությունները
- ազգի պատմությունը, մշակույթը,հոգեբանությունը
- երկրի, պետության, իշխանության քաղաքականության, գաղափարախոսության ռազմավարությունը

Պետք է նկատի ունենալ, որ բազմաթիվ այլ գործոններ էլ կան, որ պայմանավորում են մարդու գեղագիտական դաստիրակությունը՝

- աշակերտների սեռային տարբերությունը(աղջիկները, տղաները միանման չեն ընկալում գեղեցիկը, վեհը, ողբերգականը և այլն)
- տարիքային առանձնահատկությունները(կրտսեր դպրոցականը, դեռահասը, պատանին տարբեր կերպ են ընկալում)
- ընտանիքը, ժառանգականությունը
- անհատի զգացմունքայնությունը, նրա հոգեբանական տիպը

[1] Յուրի Բորև, Գեղագիտություն,Երևան,Հայաստան,1982
[2] Աշոտ Ոսկանյան, Արժեքաբանություն, Բուն TV,2018

Մշակութային կարողունակության դաստիարակությունը սահմանում է համամարդկային և համընդհանուր չափանիշներ՝ խթանելով մարդու բնագդատական մտածողությունը, գնահատելու, արժևորելու կարողությունը, ստեղծագործական ունակությունները. այն սովորեցնում է շնչավորել, անձնավորել աշխարհը, սիրել, փոխել այն: Այլասիրությունը, մարդասիրությունը փոխում են հենց իր՝ մարդու կենսակերպը, բարոյական նկարագիրը, նրա անձնական պատասխանատվությունը, նրա ապրելու կուլտուրան:

Բարձրանում է մարդու գեղագիտական ճաշակը, արվեստը զգալու, հասկանալու, գնահատելու մակարդակը, երևույթներն ու առարկաները ընկալելու կերպը:

Մշակութային կարողունակության դաստիարակության շնորհիվ կատարելագործվում են մարդու ոչ միայն միտքն ու հոգին , այլև նրա մարմինը, արտաքին տեսքը, վարվելակերպը: Նա դառնում է առավել ազատ ու երջանիկ մարդ՝ զերծ նախապաշարմունքներից ու կապանքներից: «Մարդու մեջ ամեն ինչ պետք է գեղեցիկ լինի...» չեխովյան երազանքի մի ուրույն շարունակություն է Ֆ. Դոստոևսկու միտքը. «Գեղեցիկը կփրկի աշխարհը»:

80-ականների սկզբին « Литературная газета» թերթի թղթակցի՝ ինչո՞ւ այլ գործով չի զբաղվում հարցին Հրանտ Մաթևոսյանը պատասխանում է. « Այսինքն թե ինչո՞ւ չեմ գրում, այո՞: Այսինքն թե արդեն երկու հազար տարի է գրականության մեծագույն կոթողը անցորդներիս հորդորում է չսպանել, չշնանալ, չգողանալ, բայց և՛ սպանում, և՛ շնանում, և՛ փառավորապես գողանում եմք, այո՞: Թումանյանի գոյությամբ եղեռն եղավ, Տոլստոյի ներկայությամբ հենց իր նահանգում՝ ժողովրդական խաղաղ ցույցի սևհարյուրյակային ջարդ: Մեծ գրականության Գերմանիայում ֆաշիզմ բարձրացավ, իսկ Պինոչետը բազմել է հակադիկտատորական գրեթե սերիալ վեպերի մեջ, այո՞: Ինչո՞ւ եմք գրում, երբ տերը դարձյալ բռի ուժն է, այո՞:

Այդ բոլորը՝ այդ հազարավոր պատերազմները, միլիոնավոր սպանությունները, միլիարդավոր գողությունները, ամենուրյա ու ամենօրյա շնությունը՝ այդպես եղել է. պատմությունն այդպես է հիշում, որովհետև այդպես է եղել: Իսկ թե քանի մարդու մեջ է բռնակալ սպանում այդ հակադիկտատորական վեպը, քանի մարդու բերան է թուք ու անեծքով լցնում ընդդեմ դիկտատուրայի, բիբլիական «մի՛ սպանաները» քանի կոդեքս է մտել ու քանիսին փրկել սպանելու ու սպանվելու մեղքից, քանի մեղսական սեր է խեղդել «մի՛ շնանաքը», ռազմագերու վրա քանի տոննա ոսկի է ծախսել կարեկցանքը առ գերին – պատմությունը դա չի հիշում և կարիք էլ չկա , որ հիշի, անցածն են հիշում. այսօրվա ամբողջ աշխարհը՝ մարդկանց կյանքը և նույնիսկ ցամաքի ու ծովերի կյանքը՝ աշխարհի ամբողջ գրականության առարկայացած պատկերն է, այդ պատկերի արատներն ու անբասիրությունը ճշգրտորեն մատնացույց են անում աշխարհի գրականության արատներն ու անբասիր կողմերը: Ասում եմ՝ գոնե կուլտուրայի- մշակույթի՞ ասեմ: Առաջին հերթին նաև ամբողջ կուլտուրան ինքն է

գրականության արտահայտություն: Չեմ ուզում ձեռքս հեղինակությունների մեկնել, չեմ ուզում հիշեցնել՝ ի սկզբանե էր Բանն: «Երեխաները Չինաստանում չեն մուրում, մեր երեխաները մուրում են, նշանակում է մեր մշակույթի մեջ սխալ մի բան կա». հնդիկ մի մտավորականի բանավոր այս միտքը երբ ինձ հասավ՝ տեսա, որ ինձ տանջող հարցի պատասխանը նա է գտել»:[3] Մշակույթը, գրականությունը փոխում են մարդուն, կյանքը, աշխարհը. դպրոցը, ուսուցիչը կոչված է որդեգրելու այս հավատամքը:

ԲՈԼՈՐ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ ՏԱՆՈՒՄ ԵՆ...

«Երանի՜ նրանց, ովքեր
սովորում են և սովորեցնում»:
Ավ. Իսահակյան

Մշակութային կարողունակությունների զարգացման նպատակով գործածվել ու գործածվելու են մանկավարժական բոլոր մեթոդները՝ թե՛ խոսքային, թե՛ զննական, թե՛ գործնական՝

խոսքային.

- գրույց
- դասախոսություն

[3] Հրանտ Մաթևոսյան, Ես ես եմ, Ոսկան Երևանցի, Երևան, 2005

- աշխատանք դասագրքով, գրքով
- բանավեճ
- ակադեմիական տարակարծություններ
- արտադասարանական ընթերցանություն
- հարցապնդումների մեթոդ

զննական.

- էքսկուրսիա
- ցուցադրում
- դիտում
- իլյուստրացիա

գործնական.

- վարժություններ
- գործնական աշխատանքներ
- լաբորատոր աշխատանք
- ճանաչողական խաղեր
- նախագծային աշխատանք

Արդեն ասվել է, որ մշակութային կարողունակության դաստիարակությունը ուսումնական ողջ գործընթացի առաջնահերթություններից է, որի իրագործումը դասարանում պայմանավորված է մի շարք նախադրյալներով՝

- դասարանական միջավայր
- երեխայակենտրոն ուսուցման կազմակերպում
- ուսուցչի հաղորդակցական կարողություններ
- բաց հարցեր կազմելու կարողություն
- ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերություններ (անկեղծություն, փոխադարձ հարգանք, վստահություն, աշակերտի ազատ արտահայտվելու հնարավորություն,)
- ուսուցչի վարակիչ խոսք, համոզվածություն
- ուսուցչի ձայն, կեցվածք , արտիստիզմ
- ուսուցչի խոսքի կուլտուրան-մշակույթը՝ պարզություն, տրամաբանություն, հուզականություն
- բարձրարվեստ ստեղծագործությունների ընտրություն
- չափի պահպանում

- ցուցադրման և խոսքի հավասարակշռություն
- համակցված դաս պարապելու ունակությունը (ոչ միայն ուսումնական առարկաների, այլև արվեստի տարբեր ոլորտների ստեղծագործությունների ընդգրկում)
- արվեստի, գիտության նորագույն հրամայականաններին համաձայլ ընթանալու կարողություն
- իր աշխատանքը պլանավորելու, համակարգելու կարողություն, հետևողականություն
- հետադարձ կապ պահպանելու,անդրադարձ կատարելու կարողություն
- դասի արդիականություն, ակտուալություն

Ստորև բերված աղյուսակում պատկերված են մշակութային կարողունակության դաստիարակություն իրականացնելիս խնդիրների լուծման մանկավարժական տեխնոլոգիներ, մեթոդներ:



Ուսուցիչ
Աշակերտ

Խնդրո առարկան ուսումնասիրելիս աշակերտներիս (10-րդ դասարան) գրավոր մի քանի հարցադրումներ արեցի՝ փորձելով պարզել, թե որքանո՛վ է գրականության դասը նպաստում իրենց մշակութային դաստիարակությանը, հատկապես ո՛ր գործերով են իրենք կրթվում, գրականությունը ի՛նչ չափով է փոխում իրենց և այլն: Այս հարցերից առաջինն ու երրորդը խնդրել էի գնահատել 1-10 միավորով. երկրորդի պատասխանները ինձ հուշեցին ընտրել այս աշխատանքի օրինակները: Միավորներն ավելի բարձր էին, քան սպասում էի (հանձնարարողը դասավանդող ուսուցիչն է, գաղտնիությունն ապահովված չէ): Դասարանի 85%-ը 6 միավորից բարձր էր գնահատել 2 հարցերն էլ, աղջիկները տղաներից ավելի բարձր էին գնահատել, գերազանց սովորող աշակերտուհիների գնահատականները ամենաբարձրն էին՝10 միավոր:

Աշակերտների քննադատական, կառուցողական, գեղագիտական մտածողությունը զարգացնելու համար անհրաժեշտ է ճանաչել երեխային, ուսումնասիրել նրա անհատականությունը, հաշվի առնել նրա նախասիրությունները: Ստեղծագործությունը քննելիս ճիշտ է ազատ թողնել երեխային, նախապես ոչ միայն սեփական կարծիքը չարտահայտել, չհնշել սեփական տեսակետով, այլև ցույց չտալ վերաբերմունքը: Պետք է խրախուսել, որ նա համարձակ ընկղմվի երկի խորքերը, պեղի, ուսումնասիրի ինքնուրույն, զգա և զգացածը կարողանա արտահայտել՝ չկաշկանդվելով ուսուցչի և ընկերների վերաբերմունքից: Այսօրվա աշակերտն օգտվում է զանգվածային հաղորդակցման միջոցներից, իսկ մեդիա դաշտը պոտենցիալ վտանգներ է պարունակում իր մեջ: Ուսուցիչը իր աշակերտների հետ պետք է դուրս գա բաց ծով, նավարկի նրանց հետ, բայց միշտ պատրաստ լինի ղեկը ձեռքը վերցնելու և անհրաժեշտ պահին խարիսխ ձգելու: Անհրաժեշտ է զգույշ, նրբանկատորեն սատարել երեխային, մղել կոնկրետացնելու մտքերը, հասկանալու զգացածը, համադրելու իր նախորդ, նախկին գիտելիքին՝գտնելով ներքին աղերսներ, չկտրվելով կյանքից: Գրական երկի գեղարվեստականությունը, գեղագիտական արժեքը հասկանալու համար ուսուցիչը պետք է սովորեցնի կյանքում, իրականության մեջ գեղեցիկը , վեհը, ողբերգականը ընկալել: Այս դեպքում նա ավելի լավ կհասկանա գրականության ուժը: «Բանաստեղծության մեջ կյանքն ավելի կյանք է, քան թե իրականության մեջ»[4]:

Աշակերտը կհասկանա, որ գեղարվեստական ճշմարտությունը, գեղեցիկը, վեհը, գեղագիտական մյուս հասկացությունները արվեստի գործում այլ հնչեղություն և ազդեցություն ունեն, և դա պայմանավորված է արվեստի առանձնահատկություններով՝ շեշտադրել, ընդհանրացնել, տիպականացնել: Հենց գեղարվեստական երկի միջոցով աշակերտը պետք է հաղորդակցվի խորհրդավորին, առեղծվածայինին, թափանցի մի տիրույթ, որը բառից անդին է: Աշակերտի համար պետք է թողնել անհայտ մի եզերք, մի փակ

[4] Հովհ.Թումանյան, Երկերի ժողովածու, 6 -րդ հատոր,1959

դուռ, որի բանալին միայն ինքը կարող է գտնել: Հնացել է. «Բերանից մարգարիտներ եմ թափում, բայց հավաքող չկա»: Շատ է խորհրդային: Աշակերտին պետք է ժամանակ տալ մտածելու, հավատալ նրան, զարմանալ և ոգևորվել նրա հայտագործություններով: Միայն այս պարագայում մենք կունենանք ստեղծագործ անհատականություն, որ մերժում է կաղապարները, գնում է սեփական չտրորված ճանապարհով: Համակարգված աշխատելու համար ինձ շատ է օգնում Բլումի հայտնի բուրգը, որ ոչ միայն մտածելու տարբեր մակարդակներ է սովորեցնում, այլև ապահովում է վերջնարդյունքներ: Միայն թե մեր թեման , թվում է, պարտադրում է գիտենալ բայից առաջ դնել զգալ-ը:



Աշակերտները գրականության դասերին գեղագիտական կատեգորիաների և հասկացությունների միջոցով ոչ միայն ճանաչողական գիտելիքներ են ձեռք բերում, այլև գնահատում են դրանք, զարգացնում իրենց աշխարհայացքը, փոխում իրենց ինքնադրսևորման կերպը:

Գրականության դասերին նպատակահարմար է կիրառել ինդուկցիայի մեթոդը՝ մասնավորից գնալով ընդհանուրը, ժամանակ առ ժամանակ կիրառելով նաև դեդուկցիայի մեթոդը: Ինչ խոսք, գրականության բարձրարվեստ շատ ստեղծագործություններում գեղագիտական հասկացությունները միմյանցից սահմանազատված չեն և հաճախ միասին են հանդես գալիս, որն առավել հետաքրքիր ու բովանդակալից է դարձնում գրական նյութի ուսումնասիրությունը: Արվեստը, գրականությունը ձևավորում և զարգացնում են մարդկության պատմական, հասարակական փորձի անհատական յուրացումը՝ սեփական ես-ի տեսանկյունից դիտարկել տալով ողջ աշխարհը: Անհրաժեշտ է, որ աշակերտը դեռ դպրոցական նստարանից ոչ միայն հաղորդակցվի գեղեցիկին , այլև կարողանա գեղագիտական հաճույք ստանալ:Պետք է սովորեցնել

աշակերտին սիրունից, առօրեականից տարբերել գեղարվեստական գեղեցիկը, որ կբացահայտնի նրա մեջ Աստծո արարչագործության լույսը և կմղի նրան կատարելության:

«Գեղեցիկը կյանքն է»,- սահմանում է ռուս հեղափոխական –դեմոկրատ Ն. Չերնիշևսկին, իսկ նույն կյանքի մասին ռեալիստ Ստենդալը գրում է. «Նա գեղեցիկ չէ, որովետև շպարված չէ»: Խնդիրն այն է, որ երկուսն էլ ճիշտ են: Այդ դեպքում ինչպե՞ս լուծել երկընտրանքը: Պետք է սովորեցնել աշակերտին տարբեր կողմերից դիտարկել երևույթները, առարկաները, գտնել լույսն ու ստվերները, գիտակցել, որ կան բաներ, որ միանշանակ չեն: Ճիշտն այն է, որ աշակերտը իմանա տարբեր, իր իմացածին հակասող կարծիքներ, որ առաջին հայացքից հետաքրքիր են թվում: Օրինակ՝ շվեդ դրամատուրգ Ավգուստ Ստրինդբերգը գրում է. «Սա մի խաբեբա հրեշտակ է և կոչվում է գեղեցիկ ... , որովհետև այս Գեղեցիկն է, որ փոխակերպում է իրերը այն աստիճանի, որ մարդիկ այս իրերը չեն տեսնում այլևս այնպես, ինչպես որ բնական պետք է լինեին: Այս գեղեցիկը անցնում է մեր կյանքի բոլոր շրջաններով ու կեղծո՛ւմ է, կեղծո՛ւմ է, կեղծո՛ւմ է ամեն բան»:

Աշակերտն ինքը պետք է փորձի հասկանալ ստեղծագործողի աշխարհայացքը, մեթոդը, փնտրի, զգա, հասկանա, որ գեղեցիկը բարին է, ճշմարիտը՝ տարբերելով ճշմարտության և ստի երկու երեսը, որովհետև կյանքը նրան միշտ ընտրության առջև է կանգնեցնելու: Ուսուցիչը պետք է ուղղորդի, սակայն երբեք չպարտադրի իր սեփական ըմբռնումները:

« ...Եվ այս ալեհոծումներուն ու ծփծփանքներուն վերև միշտ կը փթթի՝ փրփուրներուն շուշան ծաղիկին պես՝«լոյսի հարս» Աստվածամարին՝ցնծության ու կուսության ճերմակ գաղափարը»[5] .

Անձին ի շարժել
մարգարտափայլ գեղով.
ոտիցն ի գնալ
շողն ի կաթել առնոյր:

«Ավե Մարիա»-ների, Վերածնունդի դարաշրջանի Տիրամայրերի, Գրիգոր Նարեկացու Աստվածամոր կերպարի զուգադրական վերլուծությունն օգնում է աշակերտին զգալ կատարյալ գեղեցկությունը, հասկանալ, որ այն բացարձակ է, և հարաբերական է միայն մեր ընկալումը:

«Իմ տխրությունս կսիրեմ, զի բանաստեղծական է»[6] ,- գրում է Պետրոս Դուրյանը՝ ի պատասխան «Ավելի կը սիրեմ Ձեր ճակտի մելամաղձոտ դալուկը դիտել, քան թե գեղեցիկի մը այտին վարդերը կամ ճակտին ադամանդը» Պ. Լուսինյանի խոսքին, և ապա շարունակում.«Աշխարհի մեջ ապրեցա՞ և Ձեզի պես միայն ձայն մ'ը ըլլալ սիրեցի: Ով որ երգ չունի կամ երգել չգիտե, զգալու ներդաշնակության, գեղեցիկին ու սիրունին իտեականը շոշափելու քաղցրություն չ'ունի»: Ինչո՞ւ պատանիների, երիտասարդների սիրո

[5] Մխսա Մեծարենց,Երկեր,Երևան, Սովետական գրող,1986
[6] Պետրոս Դուրյան, Երկեր,Երևան,Սովետական գրող,1981

խոստովանությունը սկսվում է Տերյանի բառերով, մի՞թե այդ նույն բանաստեղծական պայծառ տխությունը չէ, որ սուզում է իր մեջ նրանց հոգիները՝ հաղորդակից դարձնելով տխրության, սիրո գեղեցկությանը:

Իմ խաղաղ երեկոն է հիմա

Մեղմալույս, և՛ տխուր, և՛ անուշ.

Քեզ երբեք սիրտըս չի մոռանա,

Իմ մաքո՛ւր, առաջին իմ անուրջ...

Բանաստեղծական տխրության գեղեցկությունը այնքան նեբիին շերտեր, խորքեր ունի, որ այն հաճակած աշակերտը, մարդը հարստանում է հոգեպես, դառնում ավելի կարեկից և զգայուն:

Բնափիլիսոփայությունը հայ գրականության մեջ զարմանալի դրսևորումներ ունի, խորը փիլիսոփայություն և անանց գեղեցկություն: Պատկերանում է այն մեզ մերթ որպես հայրենի եզերք, մերթ որպես « տուն»,ապաստան՝գեղեցկության, վերհուշի, սիրո, կորստի ցավի, խորը ափսոսանքի, որ թումանյանական աշխարհընկալման, կենսահանաչողության ու հանճարի շնորհիվ վերածվում է մի գեղեցիկ համանվագի.

....Կանչում է կըրկին, կանչում անդադար,

Էն չըքնաղ երկրի կարոտը անքուն,

Ու թևերն ահա փըռած տիրաբար՝

Թըռչում է հոգիս, թըռչում դեպի տուն:

Դեպ էն սարերը, որ վեհ, վիթխարի,

Հարբած շարքերով բըռնած շուրջպարի,

Հըսկա՜ շուրջպարի բըռնած երկընքում,

Հըրճվում են, ասես էն մեծ հարսանքում

Պերճ Արագածի նազելի դըստեր,

Որ Դև-Ալ, Դև-Բեթ և այլ հըսկաներ,

Խոլ-խոլ հըսկաներ հընոց աշխարհի,

Փաղցըրին բերին անառիկ Լոռի:

....Է՜յ հին ծանոթներ, է՜յ կանաչ սարեր,

Ահա ձեզ տեսա ու մխտըս ընկան,

Առաջըս եկան երջանիկ օրեր,

Սիրելի դեմքեր, որ հիմի չըկան:

Անցել են, ոնց որ ծաղկունքը պես-պես,

Որ անցած գարնան կայծն ձեր լանջում.

Անցե՛լ ձեր գըլխի հերվան ձյունի պես,
Բայց եկել եմ ես՝ նըրանց եմ կանչում:[7]

Բնությունը վերածվում է մի նեբիին տոնի, «հոգվու Կիրակիի», որի գիշերային գույները չեն զիջում Վան Գոգի «Աստղալից գիշեր»-ին: «Նրբակերտ մթնշաղը», «անույշ գիշերը» երազային հոգիների չքնաղ հանգրվաններ են, որտեղ պատսպարվում են միայնակ հոգիները «ցուրտ ցերեկներից». « Գիշերին մեջ չէ՞ ապաքեն, որ երազները ավելի վառ ու արագ վերթևումներ կ՝ունենան. գիշերին մեջ, ուր շրջանկարը ա՛յնքան հմայիչ կ՝ըլլա, և սպասումը՝ այնքան քաղցրորեն տաժանագին»[8].

Մութ սենյակիս մեջ կը շրջիմ առջի համբույրն անրջելեն,
Ու շրթունքներս են բոցավառ՝ ջերմուրեենեն երազային.
Փա՛կ են աչքերս, և կամ հանկարծ մերթ անհամբեր դուրս կը նային.
Ա՛հ, լռությունն՝ որ կը տևե, և ստվերներն՝ որ կը քալե՛ն:[9]

Բացառիկ է հայ գրականության մեջ սիրո զգացմունքի գեղագիտական արժեքը՝ սկսած միջնադարյան սիրերգակներից ցայսօր.սիրո վայելք (Քուչակ), միակողմանի, չհասկացված(Սայաթ- Նովա), պլատոնական, աննյութական սեր (Դուրյան, Մեծարեց), ողբերգական (Թումանյան), անհասանելի (Իսահակյան), երազային, անանձնական: Մ. Մկրյանը գրում է. «Մի Անուշ կամ Սարո, իրենց արտաքին ողջ պարզությամբ հանդերձ, ունեն ոչ պակաս հարուստ ու նրբագեղ ապրումներ, քան Ռոմեոն ու Ջուլիետը»[10]: Որքա՞ն գեղեցիկ է Փարվանա արքայադուստրը սիրո իր պատկերացումներով և իր հուզիչ հավատարմությամբ, որ, նյութի իշխանությանն իր դիմադրությամբ հանդերձ, նյութականցող այս աշխարհում մնում է սիրելի աշակերտին:

-Ինչի՞ս են պետք ոսկին, արծաթ
Եվ կամ աստղը երկընքի,
Ոչ էլ գոհար եմ պահանջում
Սեր-ընկերից իմ կյանքի:
Ես նրբանից հո՛ւր եմ ուզում,
Անշեջ հուրը սըրբազան,
Ով կըբերի անշեջ հուրը,
Նա է ընտրած իմ փեսան... [11]

---

[7] Հովհաննես Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, Երևան,ՀԽՍՀ ԳԱ, հ.3
[8] Միսաք Մեծարենց,Երկեր,Երևան, Սովետական գրող,1986
[9] Միսաք Մեծարենց,Երկեր,Երևան, Սովետական գրող,1986
[10] Էդ. Ջրբաշյան,Թումանյանի պոեմները,Երևանի պետական համալսարան, Երևան 1964
[11] Հովհաննես Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, Երևան,ՀԽՍՀ ԳԱ, հ.3

«Ասված միտքը կեղծիք է» Ֆ. Տյուտչևի արտահայտությունը ասես պեղված է բակունցյան ստեղծագործության խորքերից, որտեղ լռության խորհրդով են շնչում և՛ բնությունը, և՛ մարդիկ, ու լռությունը իմաստավորվում է վերհուշով, ցավով, խոնարհությամբ, դառնում է ընտրություն, դառնում ճակատագիր:

Վերջապես մի՞թե տգեղի, այլանդակի, այլակերպի միջոցով մշակութային կարողունակության դաստիարակությունը երեխայի համար ավելի ազդեցիկ, ավելի տպավորիչ չէ: Համեմատության , հակադրության միջոցով աշակերտը ավելի լավ կհասկանա Ավու ողբերգությունը(«Մթնաձոր»). մարդը օտարված է հայրենի եզերքից. օտար, անհավատ, անհայրենիք պանիները բեզ վտարում են բո տնից, եզերքից, հայրենիքից:

«...Վայրի վարազի պես էր անտառապահ Պանիկը: ....Նրա սարսափը հեռուներում էր տարածված: Նրա մասին բերնեբերան պատմություններ էին անում: Ոչ ոք չգիտեր ոչ նրա ազգությունը, ոչ հավատն ու ծագումը: Ասում էին, որ նախկին սպա է, մարդ էր սպանել, նստել էր բանտում, հետո անտառ գնացել: Հյուսիսի անտառներից մեկում նա իր կնոջն էր սպանել որսի մի գիշեր, ավելի ճիշտ՝ շներին հրամայել էր զզզել կնոջը»:[12]

Մարդու տարերքը բնությունն է, և անբնականը, հակաբնականը՝ պատերազմը, խրամատը, հրացանը, բնության մարդուն դարձել են «այլակերպ» («Այու սարի լանջին»): «Պետին այլակերպ էր դարձել: Նա քաշվել էր, կծկվել, շատ քիչ էր խոսում: Ասես ծերացել էր...»: «.... Գյուղում զենքը մահակից շատացավ»: «...Գյուղը կծկվել էր, վախից կուչ եկել»:[13] Առավոտվա ափլորականչի հետ արթնացող գյուղացին՝ Պետին, ստիպված հրացան է ձեռքն առնում, չնայած հրացանը մի քարի տակ է պահելու: Պատահակա՞ն թե՞ դարանակալ մի գնդակից զոհվում է հերոսը. տգեղը հաղթո՞ւմ է գեղեցիկին: «Գիշերվա անձրևը սրբեց, լվաց խոտերից կաթիլները Պետու արյան...

Այու սարի լանջին հիմա մի կտոր տեղ կա, ուր կանաչն ավելի փարթամ է, ավելի մուգ:

Փարթամ կանաչի տակ փտում են ոսկորները Պետու»:[14]

«Առաջ Պետին էր շարունակում բնությանը, հիմա բնությունն է շարունակում Պետուն». Սերգեյ Աթաբեկյանի բանավոր ձևակերպումն է:

Է. Հեմինգուեյի «Ծերունին և ծովը» վիպակից զետեղված հատվածը(8-րդ դասարան) աշակերտներին գեղեցիկ հնարավորություն է ընձեռում հանդիպելու 20-րդ դարին այն գրողին, որ փոխեց գրականության լեզուն, ոճը: Պատահական չէ աշակերտների սերը այս գործի հանդեպ: Ծերունու ու տղայի մարդկային հարաբերությունների գեղեցկությունը, իրենց հասակակցի՝ տղայի պատասխանատվությունը, անհուն օվկիանոսի նկարագիրը, մարդու պայքարը, նրա հաղթանա՞կը, թե՞ պարտությունը, հեղինակի հավատը՝

[12] Ակսել Բակունց,Երկեր, Հայպետհրատ,Երևան,1964

[13] Նույն տեղում

[14] Նույն տեղում

«Մարդուն կարելի է հաղթել, բայց չի կարելի ոչնչացնել», աշակերտին հեռավոր աշխարհների ու գրականությունների շունչն են բերում: Գրական գործը ընթերցելիս աշակերտը պետք է զգա գեղեցիկի պատճառած վայելքը, որ ոչնչով չփոխարինվող երջանկություն է: Իսկ դրան կարելի է հասնել առաջին հերթին կարդալով: Ընթերցման որակը բարձրացնելը ուսուցչի, դպրոցի, կրթության ողջ համակարգի հրատապ խնդիրներից է: Գեղագիտական մտքի պատմության մեջ գեղեցիկին հաճախ նույնացվում է վեհը, երբեմն՝ հակադրվում: Հավակնություն չունենալով այս խնդրում սեփական տեսակետ արտահայտելու՝կարծում եմ, որ վեհը միշտ գեղեցիկ է, իսկ գեղեցիկը ոչ միշտ է վեհ: Վիգեն Իսահակյանը՝ Ավետիք Իսահակյանի որդին, իր «Հայրս» գրքում նկարագրում է մեծ բանաստեղծի այցելությունը Ռավեննա. «Հայրս շատ էր ցանկանում տեսնել Դանթեի շիրիմը: Գտանք, Մեծ եկեղեցու բազիլիկայի մոտ էր: Սա գեղեցիկ ոճով կառուցված դամբարան էր: Հայրս խոնարհվեց նրա առջև և մի քանի վայրկյան մտասուզվեց»:[15] Ընդամենը մի քանի վայրկյան, և ծնվեց պոետական մի վսեմ երկ.

Արարատի ծեր կատարին
Դար է եկել, վայրկյանի պես,
Ու անցել:
Անհուն թվով կայծակների
Սուրն է բեկվել ադամանդին,
Ու անցել:
Մահախուճապ սերունդների
Աչքն է դիպել լույս գագաթին,
Ու անցել:
Հերթը հիմա քոնն է մի պահ.
Դու էլ նայիր սեգ ճակատին,
Ու անցիր...[16]

Հավերժի ու անցողիկի հակադրությունը որքա՞ն ընդգծում է բարձրը, անհասնելին , վեհը: Հիշենք միստիկական Մեծ տիկնոջ («Վարդանանք») դիմումը Արարատին: Արարատի կերպարը թե՛ հայ պոեզիայում, թե՛ արձակում զուգորդվում է վեհի հետ: Անշուշտ, աստվածաշնչյան «հերոս» լինելը նոր խորություն և վեհություն է հաղորդում լեռանը, որ մեզ համար ֆիզիկական միավոր չէ սոսկ, որ իր ողբերգականությամբ հանդերձ (այսքան մոտ և այսքան հեռու), գեղագիտական մտքի շնորհիվ բարձրացնում է ընթերցողին մի նոր, անհայտ հարթություն:

[15] Բանաստեղծը Ռավեննայում,Ազգ օրաթերթ,Մշակույթ, ,Երևան,2014
[16] Ավետիք Իսահակյան, Ընտիր երկեր,Երևան,2007

Չարենցի «Դեպի լյառը Մասիս» պոեմում հերոսի ձուլումը Արարատին ոչ միայն անմահության խորհուրդ ունի, այլև արձանագրում է կերպարի բարձրությունը, վեհությունը:

Դեմը –դաշտն էր անծայր, իսկ հեռվում՝ Մասիսը,
Լյառն այն վսեմ, որի ճանապարհով մի օր
Բարձրացել էր ինքը և սառցանիստ
Գեղեցկությամբ գերվել:–Եվ այժմ մենավոր
Նա գնում էր կրկին դեպի հեռուն այն լուրթ,
Դեպի լյառը անհաս ու վեհանիստ,–
Դեպի գագաթը բարձր, որ իր ժողովուրդը
Համարել է հավետ իր գոյության խորհուրդը,–
Որ ճաշակե այնտեղ հավերժական հանգիստ...[17]

Թումանյանի քառյակներում անհայտ բանաստեղծը՝ բնությունը, երկնայինը, աստվածայինը, որ հուշակել են Պոետի ծնունդը, հին աշխարհի հազար տարվա փորձը, բանաստեղծի՝ տուն գնալու երազանքը վեհի գեղագիտական ըմբռնման եզակի նմուշներ են, որ, արդեն հարյուր տարի է, հայ ընթերցողին «վայրենի աղմուկից», «էս ցեխերից» հեռացնում են, վերացնում, բարձրացնում: Վերևում արդեն խոսվել է Բակունցի «Այու սարի լանջին» պատմվածքում գեղեցիկի ու տգեղի հակադրության մասին: Հեղինակը արտաքուստ տգեղ, գյուղի ծիծաղի առարկա նախրապան հերոսի դեմքին տեսնում է վեհություն, երբ նա մարդկանցից հեռու, իր հոգևոր տարածքում «անհուն բարությամբ» ու «միամիտ սիրով» նայում էր խոտին, կովին, ծաղկած սարերին արքայի պես, Տիրոջ պես: Որքան տեղին է արձակագիր Վարդան Գրիգորյանի խոսքն այստեղ. «Ամեն ոք և արքա է և թե ծառա՝ իր ծնունդով ու մահով, ընտրությամբ ու ազատությամբ, բայց արքա անհրաժեշտության, ծառա անհրաժեշտության: Իսկ իսկական տեր է միայն նա, ով չգիտե անհրաժեշտություն, չգիտե մտրակ ու հարկադրանք, ով ծառայում է որպես արքա, իշխում որպես ծառա»: «Այս ամենը՝աշխարհի անսահմանությունն ու հավիտենականությունը, բնության ու մարդու ներքին հզոր ուժերը, բնության յուրացման, նրա մարդկայնացման անսահման հեռանկարները,արտացոլում է վեհը՝ որպես գեղագիտական կատեգորիա»:[18]

Վեհի հետ հաղորդակցումը աշակերտի մեջ դաստիարակում է հարգանք, երկյուղածություն, ինքն իրենից բարձրանալու, ինքն իր մեջ եղած ցածրը, նսեմը, ստորը սպանելու ցանկություն և կամք: Հակադրելով Մուշեղի և Շապուհի գործողությունները (Ռաֆֆի «Սամվել») հայ կանանց և պարսիկ թագավորի կանանոցի հանդեպ՝ աշակերտները, անկախ Մուշեղի արաբի հանդեպ կարծիքից, միանշանակ մերժում են Շապուհին՝ հարգանքով լցվելով Մուշեղի հանդեպ: Արհամարհական է վերաբերմունքը Զիմզիմովի

[17] Եղիշե Չարենց,Ընտիր երկեր,Երևան,Նաիրի,1997
[18] Ցուրի Բորև, Գեղագիտություն,Հայաստան,1982

(Սունդուկյան, «Պեպո») ողբմելի, ստոր արաֆի հանդեպ, չնայած աշակերտներից ոմանք չեն բացառում հավանականությունը նմանօրինակ արարք գործելու, բայց բացարձակապես մերժում են նրա խստմնելի շողոքորթությունը: Այսինքն՝ ցածրը, ստորը երեխաները փնտրում են արարքների , գործողությունների մեջ՝փորձելով դրանք հասկանալ, բացատրել, բայց և միաժամանակ մերժելով դրանք, գիտակցելով, թե ինչ չի կարելի անել:

Վեհի և ողբերգականի միջև կան անորսալի աղերսներ , որ թերևս պայմանավորված են երկուսի՝ ընթերցողի վրա թողած ազդեցությամբ նաև:

....— Ընչի՞ չես խոսում, ընչի՞ չես նայում,

Իմ օր ու արև, կյանք ու ջան՝ որդի,

Դու իմ գերեզմանն ընչի՞ ես խըլում,

Թըշնամի՛ որդի, դավաճա՛ն որդի... ...—

Կարմիր արևից ընկած, Սարո ջա՜ն,

Կանանչ տերևից ընկած, Սարո ջա՜ն...

Արևս հանգավ, Սարո ջա՜ն,

Գիշերս ընկավ, Սարո ջա՜ն...[19]

Ինչպե՞ս է ցավը այսքան պարզ խոսքերով վերածվում ողբերգականի, ինչպե՞ս է մոր և սիրած աղջկա անսփոփ վիշտը ծուլվում բնությանը, անէանում գետի, երկնքի խորություններում և ինչպե՞ս է վերածվում անխառն ու ջինջ պատկերի, որ այդպես մաքրում է էությունդ և լուսավոր, երջանիկ վայրկյանների վերածվում. ահա պոեզիայի, գեղարվեստի առեղծվածը :

Համբարձման գիշեր, էն դյութիչ գիշեր,

Կա հըրաշալի, երջանիկ վայրկյան.

Բացվում են ոսկի երկընքի դըռներ,

Ներքև պապանձվում, լըռում ամեն բան,

Ու աստվածային անհաս խորհըրդով

Լըցվում բովանդակ Ներա սուրբ գըթով:[20]

Խոհը, կասկածը, երկմտությունը, որ դառնում են համլետյան հարց՝ ցավագին ու սրտմաշուկ, աշակերտի համար բացահայտում են ընտրության դժվարությունը՝ միաժամանակ հուշելով, որ ամեն ինչ իր գինն ունի, և պարտությունն ու հաղթանակը երկու մեծ «կեղծավորներ» (Քիփլինգ) են: Հերոսների ողբերգական երկվությունը, գիշերվա «չարաշուք» մտքերը(Զարենց «Խմբապետ Շավարշը», «Դեպի լյառը Մասիս») աշակերտներին օգնում են բացահայտել շրջադարձային պահերին

[19] Հովհաննես Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, Երևան,ՀԽՍՀ ԳԱ, հ.3

[20] Նույն տեղում

տառապող մարդկանց, նրանց ընտրությունն ու վախճանը՝ միմյանցից տարբեր և միմյանց մերժող: Խաբված, խոցված որդու ընդվզումը (Զարենց «Վահագն», «Պատմության քառուղիներով») ոչ միայն պատմական հենք , այլև «վավերական դիմադարձություն» (Մաթևոսյան) է հուշում, որ իր ողջ ողբերգականությամբ հանդերձ, «ազատների հայրենիք» է բարձրացնում: Գեղարվեստական գրականությունը հարուստ է անհատի և ամբոխի հակադրությունը, անհատի դրաման բացահայտող ստեղծագործություններով, որոնք, չնայած իրենց ողբերգականությանը, ընդգծում են ու բարձրացնում մարդու անկրկնելի անհատականությունը: Ծիծաղելու ընդունակությունը մարդուն տրված պարգևներից է, որ նրա բարոյական նկարագրի, ինտելեկտի, նրա աշխարհայացքի անխարդախ հայելին է: Հայնրիխ Հայնեին ուղղված բանաստեղծության մեջ Զարենցը գրում է.

Իսկ ապա, երբ ճամփիս ծաղիկները

Փոխվեցին փշերի ու խոցի–

Սիրեցի երկմիտ շուկներդ,

Եվ հեգնանքդ, որ նման է բոցի.[21]

Կոմիկականի մշակութային առանձնահատկությունն առավելապես արդիականության քննադատությունն է, որ, սակայն, սկսվելով ներկայում, կենսունակ է լինում ապագայի համար (Թումանյան« Քաջ Նազար», Պարոնյան «Մեծապատիվ մուրացկաններ»): Խոսքի, դրության կոմիզմը, հումորը, հեգնանքը, սատիրան, իրենց հրաշալի դրսևորումը ունենան ոչ միայն հայ գրականության, այլև հայ բանահյուսության մեջ, որտեղ ժողովրդական առողջ միտքը շողարձակում է ծիծաղի միջոցով («Սասնա ծռեր., հեքիաթներ): Ծիծաղի սուր ու վարակիչ բնույթը, մերժման ժողովրդական պաթոսը խոսքի միջոցով աշխարհը փոխելու հզոր ուժ են: Գեղագիտական հասկացությունները փայլուն փաթեթավորումներ չեն ստեղծագործության բովանդակությունը համար. դրանք բխում են գործի էությունից և, ինչ խոսք, պայմանավորված են բազում գործոններով և, անկասկած, արվեստագետի, գրողի ստեղծագործական մեթոդով:

Սայաթ–Նովան՝«երանգների պոետը»(Վ.Բրյուսով) իր գեղագիտական հավատամքը արվեստի հասարակական դերն էր համարում. Արի

համով ղուլուղ արա, խալխի նոքար Սայաթ– Նովա...

Շատ տըխուր սիրտ կու խնդացնիս, կու կտրիս հիվընդի դողը

Ցիփ քաղցը ձայնդ վիր կոնիս, բաց կուլի հիտըդ խոսողը...[22]

[21] Եղիշե Զարենց, Ընտիր երկեր, Երևան, Նաիրի,1997

[22] Սայաթ–Նովա,Հայերեն,վրացերեն և ադրբեջաներեն խաղերի ժողովածու,Հայպետհրատ, Երևան,1959

«...Ի՞նչ է որ բանաստեղծին կոչումը,–հարցնում Մեծարենցը և պատասխանում,–«Բանաստեղծը Սիրո կը նմանի. և իր պաշտոնն է ճամբաները լուսավորել: Անիկա կ՝առնե կը տանի յուրաքանչյուր հոգի իրեն ճակատագրված վայրերեն և ցույց կու տա անոր հրեշտակային գանձեր»:[23]

Իրենց հավիտենական որոնումներով, հարուստ գեղագիտությամբ գրողը, գրականությունը սովորեցնում են մարդուն ապրել այս մեծ, գեղեցիկ ու դժվար կյանքը:

«Իսկ ի՞նչ է՝սկզբից էր Բանը, և Բանը Աստծո մոտ էր...Ծագում և ավարտ չունեցող առեղծվածային նախադասությունը: Գուցե Բանը որպես Հավիտենությունը ճանաչելու խղճ էր դրվել գրողի սրտի մեջ, որ ողջ կյանքի ընթացքում ընկնել–ելնելով՝ բոլոր շրջադարձերին, ջրվորների մոտ մոգական այդ միակ խոսքն է փնտրում, որը զորություն պիտի ունենար՝ազդելու իրականության վրա, մեղմելու աշխարհից՝ մարդուն հեղեղող, հալումաշ անող վախերը, մահվան հետ դեմադեմ միայնակ մնալու սարսափը, մինչև դրախտի դռները հասնելը ամայի ճանապարհներին ուղեկցող ոչ մի հրեշտակի չհանդիպելու զարհուրանքը: Այդ խոսքին հանդիպելու նպատակով է գրիչ վերցրած օրվանից նա դերվիշի նման թափառումների ելնում՝ մի ոտքը Ադամի արարման կավին է լինում, մյուսը՝ երկնքում, որտեղ Բանից ծագող սկիզբն է:»[24]

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Լեզուն, լինելով ազգային գոյության հիմնական նախապայմանը, ազգային մշակույթի, պատմության, ապագայի բանալին է: Նրա օգնությամբ և նրանով է արժևորվում ազգի մշակույթը, որ ոգու ազատագրման արտահայտություն է: Ի վերջո, ողջ աշխարհը, մարդկային միտքը, որոնումները ուղղված են ճշմարտության որոնմանը, որը ի զորու է հայտնաբերելու մշակութային կարողունակությունը. չէ՞ որ մշակույթի հիմնական խնդիրներն ունեն համամարդկային հնչեղություն: Լեզուն, գրականությունը կյանքը, մարդուն ճանաչելու յուրահատուկ գործիքներ են, որ կարող են մարդուն մարդ պահել և օգնել դարձնելու Մարդ: «La plus grande chose du monde c'est de sçavoir etre a soy»[25],– գրում է ֆրանսիացի մեծ մտածող Մոնտենը: Իրերի խորքը թափանցելը պահանջում է կառուցողական ջանքերի լարում, բայց այն մեզ օգնում է նաև կարողանալ լինել, կարողանալ ապրել այս աշխարհում: Հանրակրթության պետական չափորոշիչը նույնպես սահմանում է.

«Հայոց (մայրենի) լեզվի և գրականության ուսումնասիրությունը սովորողի անձնային նկարագրի, կարողությունների, հմտությունների, արժեհամակարգի ձևավորման և զարգացմանն է ուղղված: Գրական և ոչ գրական, արձակ և չափածո տեքստերի ընթերցումը, դրանց համակողմանի վերլուծությունը քննադատական և պատկերավոր մտածողության զարգացման նպատակ ունեն: Գրական-գեղարվեստական տեքստերի լեզվաոճական վերլուծությունը, դրանց կազմում հանդես եկող առանձին բառերի իմաստային,

[23] Միսաք Մեծարենց,Երկեր,Երևան, Սովետական գրող,1986

[24] Լևոն Խեչոյան, Պատմվածքներ(կազմ.Սամվել Մկրտչյան),Երևան, Հեղ.հրատ.,2013

[25] Աշխարհի ամենամեծ բանը ինքն իրեն ճանաչելն է:

բառակազմական և ձևաբանական ֆունկցիաները, օտար լեզուներից թարգմանությունները զարգացնում են աշակերտի լեզվամտածողությունը, ձևավորում են որոշակի վերաբերմունք մայրենի և օտար լեզուների հանդեպ, սովորեցնում են հարգել թե՛ սեփական, թե՛ օտար մշակույթները, արժևորել դրանք որպես համամարդկային մնայուն արժեքներ»:

Նկատելի է, որ արդի դարաշրջանում երկչափ կրթությունից՝ գիտելիք - կարողություն կամ հմտություն, անցում է կատարվել եռաչափ կրթության՝ հասկացություն – գիտելիք – կարողություն/հմտություն: Այդ է պատճառը, որ հայոց լեզվի և գրականության վերջնարդյունքները սահմանվել են որոշակի հասկացությունների և ենթահասկացությունների տիրույթներում:

Կարողունակությունը անհատի համալիր բնութագրիչ է. այն գիտելիքների, հմտությունների, վերաբերմունքի և արժեքների համակարգ է, որը թույլ է տալիս տարբեր ոլորտներում հաջողությամբ լուծելու կոնկրետ խնդիրներ: Հայոց լեզվի, գրականության առարկաների դասավանդումը, որ այլ կարողունակությունների շարքում, մշակութային կարողունակությունը զարգացնելու նպատակ է հետապնդում, օգնում է լուծելու կարևորագույն խնդիրներ՝ ճանաչել, հասկանալ, կիրառել, գնահատել, ստեղծագործել, վերափոխել, և, իհարկե, կարողանալ լինել, կարողանալ ապրել:

Օգտագործված գրականության ցանկ

Հանրակրթության պետական չափորոշիչ

Հրանտ Մաթևոսյան	Ես Ես եմ
Ցուրի Բորև	Գեղագիտություն
Հովհաննես Թումանյան	Երկերի լիակատար ժողովածու
Ակսել Բակունց	Երկեր
Ավետիք Իսահակյան	Ընտիր երկեր
Եղիշե Չարենց	Ընտիր երկեր
Սայաթ-Նովա	Հայերեն, վրացերեն և ադրբեջ. խաղերի ժողովածու
Պետրոս Դուրյան	Երկեր
Միսաք Մեծարենց	Երկեր
Լևոն Խեչոյան	Պատմվածքներ
Էդվարդ Ջրբաշյան	Թումանյանի պոեմները
Աշոտ Ոսկանյան	Արժեքաբանություն